ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.02.2020թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Վահագն Ավագյանը, Արմեն Մատինյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Խորեն Վարդանյանը, Մարինե Հովհաննիսյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արևիկ Լոքյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Արեն Խաչատրյանը, Կարեն Դավթյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Արմեն Ավետյանը,Վահե Կոռյանը, Հայկազ Սիմիկյանը, Անահիտ Կարապետյանը, Արման Սիրադեղյանը, Ռոմիկ Մարգարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը, Հրաչիկ Ղամբարյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Վահե Դոխոյանը, Արման Ափինյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

Տիգրան Նազարյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Սեիրան Աղաբեկյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, մարզպետարանի, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ ու քաղաքացիներ:

Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2020 թվականի 14.02.2020 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել ներկայացված օրակարգը:

Կողմ՝ 27, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը՝

1.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23 –ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ. Գրիգորյան

2.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23 –ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ. Գրիգորյան

3.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին

զեկ. Վ. Գրիգորյան

4.Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

զեկ. Ա.Հովհաննիսյան

5.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 148 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին

զեկ. Կ.Պառավյան

6.Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 23 նոյեմբերի 2017 թվականի թիվ 95-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Գ.Բաղյան

7.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28–ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

8.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28–ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

9.Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով շինություն և հողամաս տրամադրելու մասին

զեկ. Ս.Աբովյան

10. Վանաձոր քաղաքի Տ.Մեծի պողոտա թիվ 34Թ հասցեում գտնվող «Կինոթատրոն Մոսկվա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2500.0քմ մակերեսով հողամասը գնելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

11.Սեյրան Սավայի Մելիքյանին Վանաձոր քաղաքի Նիզամի փողոցի թիվ 55/11-4 հասցեում գտնվող հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ. Ս.Աբովյան

12.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս.Աբովյան

13.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

Մինչ օրակարգային հարցերի քննարկումը, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար կայացած մրցույթներում հաղթող ճանաչված անձինք, ովքեր առաջին անգամ էին համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնում, հանդիսավոր կերպով երդվեցին արժանապատվորեն կրել համայնքային ծառայողի բարձր կոչումը: Համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանը և ավագանու անդամները շնորհավորեցին նրանց՝ մաղթելով արդյունավետ աշխատանք:

ԸՆԹԱՑՔԸ՝

1.ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23 –ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Նիստը վարող Մամիկոն Ասլայանը ամփոփ ներկայացրեց համայնքի 2020 թվականի բյուջեում համայնքի ղեկավարի լիազորությունների ուղղությամբ կատարվելիք ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցները

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25 , ձեռնպահ՝ Վ. Կռոյան, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23–ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Արջուտ համայնքի ավագանու ուղերձի և խնդրանքի հիման վրա 4 մլն դրամ կհատակացվի Արջուտ համայնքին, որպես աջակցություն համայնքային ներդրուման մասով, սուբենցիոն ծրագրով ներհամայնքային ճանապարհի վերանորոգման նպատակով:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Ավագանու անդամ Արմեն Մատինյանն առաջարկեց ստեղծել հանձնաժողով, Վանաձորի Կ.Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ-ի պահուստներից այն արժեքավոր գեղանկարների հետագա ճակատագիրը որոշելու համար, որոնք անցյալ դարի 90-ականներին տեղափոխվել են Երևան՝ ի պահոց: Առաջարկն ընդունվեց ի գիտություն:

Նիստը վարողնառաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17 , դեմ՝ Վ. Կռոյան, Հ. Սիմիկյան, Ք. Մարուքյան, Ա. Կարապետյան, Ա. Սիրադեղյան, ձեռնպահ՝ Ա. Ավետյան, Կ. Ղուկասյան, Ռ. Մարգարյան, Ս. Ղամբարյան, Ա. Մատինյան, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու անդամ լիազորելու վերաբերյալ:

- Զեկուցեց աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց ավագանու անդամ Կարեն Դավթյանի թեկնածությունը, որպես լիազորված անձ վարչական դատարանում ՝ մեկ տարի ժամկետ:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել Կարեն Դավթյանի թեկնածությունը::

Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 148 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 26, ձեռնպահ՝ Վ. Կռոյան, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ -Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 23 նոյեմբերի 2017 թվականի թիվ 95-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28–ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նախագիծով առաջարկվում էր «Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում կրճատել երեք հաստիք և ավելացնել 5 հաստիք: Քննարկումների արդյունքում ավագանու նադամները նպատակահարմար չհամարեցին այս պահին նման որոշում ընդունելը, ինչի հետ մասնակի համաձայնեց նաև ՀՈԱԿ-ի տնօրեն Վարդան Դոլմաջյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, դեմ՝ 23, ձեռնպահ՝ Վ. Կռոյան, Կ. Ղուկասյան, Ա. Սիրադեղյան, Ա. Ավետյան որոշում չընդունվեց:

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28–ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- - զեկուցեց աշխատակազմի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 24 , ձեռնպահ՝ Վ.Կռոյան, ընդունվեց որոշում:

9. **ԼՍԵՑԻՆ-** Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով շինություն և հողամաս տրամադրելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը

Քվեարկությամբ, կողմ՝ 23 , որոշում:

10. **ԼՍԵՑԻՆ**- Վանաձոր քաղաքի Տ.Մեծի պողոտա թիվ 34Թ հասցեում գտնվող «Կինոթատրոն Մոսկվա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2500.0քմ մակերեսով հողամասը գնելուն համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

11.ԼՍԵՑԻՆ- Սեյրան Սավայի Մելիքյանին Վանաձոր քաղաքի Նիզամի փողոցի թիվ 55/11-4 հասցեում գտնվող հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

13.Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2020 թվականի մարտի 12-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2020 թվականի մարտի 12-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 10.00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը